

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253:

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1898 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱԶՈՐԻ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տան և մէկ և տան ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., վեց ամսականը՝ 7 ռ., հինգ ամսականը՝ 6 ռ., չորս ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
«ՄՇԱԿ» գրել կարելի է ԽՊՖԱԳՐԱՏԱՆԸ (Բազմապատկեր և Բարձրագույն փողոցների անկիւն):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարծանքի օրեր. Օգնելու մի նոր միջոց.—
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նա-
մակ Ախպետայի. Նամակ Շուշու. Նամակներ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Կերականայի. Նամակ Ամերիկայի. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բարեկամը:

ՊԱՐԾԱՆՔԻ ՕՐԵՐ

Փետրվարի 19-ին, պատմական այդ
նշանաւոր օրը, «Петербургская Бѣдо-
мостія» լրագիրը ոգևորութեամբ գրում
է հետեւեալ տողերը: «Այսօր Ռուսաս-
տանի և ամբողջ սլաւոնականութեան
համար մեծ և յիշատակի արժանի օր
է: Այսօր իրագործվեց զիւղացիների ա-
զատութիւնը: Այսօր կը բացվի Սան-Ստե-
ֆանայի դաշնագիրը, որով հիմը դրվեց
բոլորարեւելի ազատութեան: Ի՜նչ կարող է
այսօր մտածել և գգալ ուսու մարդը: Այն,
որ նա պատկանում է մեծ ազգին, որ կա-
տարեց այդպիսի մեծ գործերը»:

Այո, իրաւունք ունի ուսու մարդը պար-
ծենալ փետրվարի 19-ի օրով: Այդպիսի օ-
րերն են ազգերին մեծ և հերոսական շի-
նում: այդպիսի օրերն են, որ՝ գրաւում են
օտար ազգերի համակրութիւնը դէպի մի
ազգութիւն. այդպիսի օրերն են ոգևո-
րում մեծ պետութեան ցրուցան մասերը
դէպի ընդհանուր մարդկային համերաշխ
գործունէութիւն:

Որքան շատ են այդպիսի նշանաւոր օրեր,
որչափ բաւարարիւ են այդպիսի փառաւոր

երեսներ ազգի կեանքում, այնքան ջերմ և
խորն է այն զգացմունքը, որ կապում է
մարդուն երկրի հետ և դարձնում
հայրենասիրութիւնը խելացի և ոգևորիչ:
Այդ նշանաւոր օրերն են, որ օգնում են
մի ազգի նրա կեանքի ծանր և դժուար
օրերներում: այդ օրերն են, որ միացնում
են բոլորին՝ միահամուռ ոյժերով իրագոր-
ծելու նոր մեծ ձեռնարկութիւններ և
մարտերու ընդհանուր թշնամու դէմ:
Մարդիկ առօրեայ կեանքում յաճախ մո-
ռում են բարձր գաղափարները և երես
դարձնում նրանցից: Եւ միայն նշանաւոր
պատմական օրերն են, որ յիշեցնում են ե-
սականութեան և մանր հաշիւների մէջ
խրված մարդկային, թէ ազգը կարող է ի-
րագործել և լայն հասարակական ծրագիր-
ներ: Այդ օրերը թանկագին օրեր են, այդ
տեսակ օրերը մի ազգի պարծանքն են:

ՕԳՆԵԼՈՒ ՄԻ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Պետերբուրգի գեմատօի մի նոր փորձը
առիթ է տալիս մեզ կրկին խօսելու ժո-
ղովրդական էփան կրեդիտի մասին: Ինչ-
պէս յայտնի է, հարուստ մարդիկ միշտ ա-
ւելի էփան կրեդիտ են փող դնում, քան
համեմատաբար աւելի անապահով և չքա-
ւոր մարդիկ, մանաւանդ, երբ սրանք հե-
ռու են քաղաքակրթված կենտրոններից:
Քաղաքներից: Արդարեւ, մինչեւ հարուստ
ներք բանկերի միջոցով կարողանում են
ձեռք բերել 8—6 և մինչև անգամ 5—4
տոկոսներով գումարներ, արհեստաւոր և
մանաւանդ գիւղացի դասակարգը շատ քիչ

—Անկարելի է, կը պնդէր երեսասարդ մը,
ես երբեք չեմ կրնար ներել, որ մէկն իմ սիրած
կէսն անպատուէ... մէ, մէ:

Եւ ահա ծերունին իր արեգադր գլուխը շար-
ժեղով կը սկսի խօսել:

—Թերեւ իմ կողմէն անպատշաճ է ձեր խօ-
սակցութեան մէջ խառնել, որովհետեւ դուք
ձեր այդ տարիքին մէջ՝ ուրիշ տեսակետով կը
քննէք խնդիրներն ու անմիջապէս վճիռ կարծա-
կէք. սակայն եթէ քիչ մը համբերութիւն ունիք՝
ձեզի անցած դէպքը մը պիտի պատմեմ, այն ա-
տեն վստահ եմ, որ ինձի իրաւունք պիտի տաք:

—Այո, այո, կը խնդրեմ որ մեկի պատմեք...
կը դռնէն ամենը մէկէն:

Ծերունին ծիափողէն գորաւոր շուշ մը ներս
կը քաշէ և բերանէն մուխի սե ամպ մը դուրս
հանելէն վերջ:

—Նրբ գաղափարներ ընթացք աւարտելի դեռ
հազիւ քսան տարեկան՝ Պարիզ եկալ ուսումն
շարունակելու համար: Բնական է թէ տակաւին
ոչ որ չէի ձանձաղ Պարիզի մէջ, բացի քանի մը
բարեկամներէ, որոնք շատոնց արդէն ծանօթ էին
ինձ, մասնաւորապէս Վահան՝ որ իմ ամենին
աւելի մտերիմ բարեկամն էր արդէն՝ դպրոցի
չէպէքն սկսած, և որ երկու տարիէ ի վեր Պա-
րիզ կը գտնուէր այն ատեն՝ բժշկութիւն սովոր-
ելու համար:

Երեսասարդներն ուշադրութեամբ ծերունիին

դէպքերուն է փոխարինութիւն անում
7—12⁰/₀—ով, իսկ յաճախ նա տալիս է դը-
րամատէրին 24—40 և աւելի տոկոս: Ժո-
ղովրդին այդ անմխիթար և ծանր դրու-
թիւնից հանելու համար՝ առաջարկված են
զանազան տեսակ դրամարկներ և ընկերակ-
ցութիւններ: Պետերբուրգի գեմատօն էլ
իր կողմից փորձ է արել բանալ ժողովրդի
համար էփան կրեդիտ, ընդունելով նրանից
հաջահատիկներ: Գիւղացին, որ առաջ
ստիպված էր փող ձեռք բերելու համար
անպատշաճ ծախել իր տան պաշարները
էփան և անձեռնառ զներով կամ պարտք
վերցնել մեծ տոկոսներով, այժմ դիմում է վերցնում
համար էփան կրեդիտ, որը նրանից գրաւ է
հաջահատիկը և տալիս է փող: Նրբ գիւ-
ղացին նորից փող է ձեռք բերում, նա յետ
է ստանում իր հաջը. կամ եթէ հաջը նրան
հարկաւոր չէ տան պէտքերի համար, նա
ծախում է այդ հաջը այն ժամանակ, երբ
վաճառանոցում նրա գինը բարձրացած է
լինում: Ահա մի քանի տարի է, որ փորձը
աջողութեամբ առաջ է գնում և ներկա-
յում երեք գաւառական գեմատօններ յա-
կացրել են այդ նպատակի համար որոշ
գումարներ:

Այդ տեսակ փոխառութեան գործը մի
դժուարութիւն ունի. այդ այն է, որ հա-
ջահատիկների պահպանութեան համար
պէտք է ունենալ լաւ պահեստներ, յար-
մար ամբարներ, որպէս զի հաջահատիկը
չը փչանայ խնամաւորութիւնից և չը վնասվի
միջնորդ և զանազան միջամտելից: Բաւա-
կան է փորձ ինչ անհոգութիւն այն վար-
չութեան կողմից, որ վերցրել է իր վրա
այդ գործի հոգսը, որպէս զի օգտաւէտ և
բարեբար ձեռնարկութիւնը քայքայվի և
ոչնչանայ: Ժողովրդական հիմնարկութիւն-
ների տարեգրութեան մէջ կան և այդտե-
սակ շատ փաստեր. օրինակ, գիւղական
շտեմարանները յաճախ մեծ վնասների մէջ
են ընկել շտրկիւ հակողութեան պակա-
սութեան: Պետերբուրգի գեմատօն այդ
լաւ է հասկացել, ուստի նա մեծ ուշադ-
րութիւն է դարձրել գործի այդ կողմի
վրա:

Մենք կարծում ենք, որ Պետերբուրգի
գեմատօնի փորձը կարող էր մասամբ իրա-
գործել Թիֆլիսի նահանգում գոյութիւն
ունեցող «Գիւղատեսակական դրամագրութիւն»
կոչված հիմնարկութիւնը: Ինչպէս յայտնի
է, Թիֆլիսի նահանգի գիւղերը ամեն տա-
րի մի յայտնի քանակութեամբ հաջահա-
տիկ են տալիս գիւղական շտեմարաններին

երեսը կը նայէին՝ կարծես թէ ամուր դէմքին
վրա ջանալով կարգաւ այդ պատմութեան բուն
իմաստը:

Իսկ ծերունին քիչ մը մտածելէ յետոյ սկսաւ
շարունակել:

—Գրեթէ տարի մը անցած էր Պարիզ ուղ-
կուելէս ի վեր. բաւական ժամէն ուսումնասի-
րած էի աշխարհի այս հաշակաւոր ոստանին նը-
շանաւոր շէնքերը, հուշարկները, դրոստոցի-
ները, նորութիւններն ու ժողովուրդին բարքը, և
առիթ ունեցած էի շտեմարան հետ բարեկամա-
նալու:

—Օր մը պատահամբ ծանօթացայ գեմատի
ֆրանսուէի մը հետ, որ շատ հաճելի ու գրաւիչ
երեցաւ ինձի, այնպէս որ սկսայ առիթներ
փնտռել ամուր հետ տեսակցելու համար: Գիւղ-
ւածը կարծես թէ կօզնէր ինձի, յարմար միջոց
ները պակաս էին միշտ՝ զիցքը տեսնելու և ա-
նոր հետ խօսելու համար. և ինձի եղած սիրա-
ւելի ընդունելութիւնն ու անուշ ժպիտներն աւելի
ես կը քաջալերէին զիս՝ այցելութիւններս աւելի
յաճախ շարունակելու:

—Կարճ ժամանակի մէջ արդէն բարեկամ էիք
իրարու հետ:

—Գիտական էր, որ օտարերկրի մը մէջ, հեռու
քաղաքական գոտիներէն, հեռու նոյն իսկ
բարեկամներու սիրով ժպիտներէն, շատ մեծ
հաճոյք և ուրախութիւն կը պատճառէր ինձ ծա-

և այդպիսով արդէն կաղմել են մի խոշոր
գրամագրութիւն: Պահեստներ կան, դրամագ-
րութիւն կայ, կազմակերպութեան կորիզը գո-
յութիւն ունի: Մնում է այդ բոլորը յար-
մարեցնել կրեդիտի պահանջներին համա-
ձայն: Անկասկած, տեղական գեմատօն ա-
ւելի հեշտ և աւելի շուտ կիրառործէր
այդ տեսակ ծրագիրները: Բայց քանի որ
գեմ. դրական լուծում չէ ստացել գեմատ-
փոխարինութեան, պէտք է փորձել օգնութեան
զալ ժողովրդին գոյութիւն ունեցող հիմ
նարկութիւնների միջոցով: Եթէ փորձը ա-
ջող լինի Թիֆլիսի նահանգում, այն ժա-
մանակ կարելի է նրան տարածել և մեր
երկրի ուրիշ մասերում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ն Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

«Ղեկավարներ», գիրք Ա. Է. Վաղ Բաշկովի, II. «Մեր
տէրը», գիրք Ա. Մ. Աւետիսեան—Բանասեր, հրատ.
Ս. Ն. Գրական (Գրականութիւն), Թիֆլիս, 1897 թ.
գիրք 40 է. 97 էրես:

Այդ գրքերի նիւթը վերցրած է ժողովրդա-
կան կեանքից, որի հետ, ինչպէս երևում է, հե-
ղինակը լաւ ծանօթ է: Առաջին գրքից՝ «Վաղ
Բաշկով» (հասարակական գործիչ, ղեկավար) իր-
քն ամբողջութիւն ամբողջած է ու կարգաւորում է
առանց ձանձրութեան, բայց չունի աչքի ընկնող
գրականական արժանատիւութիւններ ու այնպի-
սի տպաւորութիւն է գործում, ինչպէս այն դէմ-
քերը, որոնց մասին անցադիմութեամբ ընդունված
է գրել՝ «сезъ особыхъ примѣтъ»: Այդ կարող է
առաջնակ կամ հեղինակ գրականական ընդու-
նակութեան միջակութիւնից կամ նրանից, որ
նա գրել է գրքից առանց սպասելու, որ ժող-
վրդական կեանքի պատկերները համեմատ
երեսայնութեան մէջ որոշ աստիճանի պայծառու-
թեան, իսկ այդ պատկերները հետ կապված
տրամադրութիւններ որոշ աստիճանի պիտի
Մեզ հաւանական է թուում երկրորդը, որովհետեւ միւս
գրքիցում («Մեր տէրը»), որ իբրեւ ամբողջութիւն
անապօղ է և ցոյց է տալիս հեղինակի անսխա-
տութիւնը տեխնիկայի կողմից, կայ սակայն մի
մեծ հատուած, 8—9 էրես, որ կարող է բաւա-
րարութիւն տալ գրականական ամենախիտ
պահանջներին: Զրոյցի այդ մասում հեղինակը
գիւղացու տեսակետից նկարագրում է գիւղական
քահանայի ծանապարհօրութիւնը դէպի Արթուր
սարը և այնտեղից վերադարձը Արթուրի սուրբ
քարը ձեռքին, որի ջուրը գցելը համարվում է
միայն միջոցը երազայից ազատվելու համար: Նը-
կարագրութիւնը թափանցված է զօրեղ էպիկա-
կան տրամադրութեամբ: Բայց այդ հատուածը
բացառութիւն է կազմում գրքից մէջ, որ, ինչ-

նօթութիւնն այդ կնիք՝ որ թէ և օտար՝ իր անուշ
լիզուովն ու համակրելի խօսակցութիւնով գրե-
թէ մոռցնել կուտար ինձ պանդխտութեան բոլոր
դանտութիւնները:

«Սակայն չէի ուզեր առանձին վայելել այդ ա-
նակնակ խնդրութիւնը. ուստի ամեն ինչ մաս-
նամասնօրէն պատմեցի բարեկամիս, Վահանին,
որ առաջին վայրկեանէն դարմանալով հանդերձ՝
չափազանց ուրախացաւ ու սկսաւ շնորհաւորել
զիս, որ այդպիսի շուտով կրցած էի ծանօթու-
թիւն հաստատել օտարների մը հետ, և ցան-
կութիւն յայտնեց բարեկամակցիս հետ ինչ ալ
ծանօթանայու...»

«Այնուհետեւ գրեթէ ամեն իրիկուն Վահանին
հետ կը թափայէր բարեկամակցիս սենեակը և կամ
զայն կը հրաւիրէր իմ սենեակս, և հաճելի ըն-
թերցանութիւններով ու հետաքրքրելի նիւթերով
վրա խօսելով ժամանակ կանգնէինք:

«Բայց ես հետզհետեւ մեծ փոփոխութիւններ
սկսայ տեսնել իմ վրա. ֆրանսուէին մարդնայի
մը պէս ազդած էր օրտիս վրա ու շարունակ
դէպի իրեն կը քաշէր զիս. ամուր մէկ նայուած-
քը, մէկ ժպիտը կը գնում ինձ, կը հնայէր հո-
գիս ու կը գրայի թէ այդ կիներն այլ ևս օտար
բարեկամակցի մը չէր ինձ համար, այլ օրտա-
կից մը...»

«Նախ կարծեցի թէ ցնորական երազներ պա-
շարած են գլուխս ու կը շարժարեն զիս, և ու-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13